



# Ազգարարութան Trumpet's Sound ինք

48-ՐԴ ՏՄՐ, ԱՌԱՍՏԱՎԵԼՎԱ  
ՅՈՒՆԻՎ - ՕԴՈՒՏՈՒ 2017



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂ»  
երկամսյա հոգեւոր քերք

Պատասխանատու խմբագիր՝  
հովի Հրաշ Գոյցուճեան

ACM AUSTRALIA  
PO BOX 1593,  
CHATSWOOD NSW 2057  
EMAIL: hkiujian@acmaust.org  
URL: www.acmaust.org



## Բովանդակութիւն

Հնագաւառութիւն . . . . .	<b>3</b>
<i>Հովի Հրաշ Գոյցուճեան</i>	
Չունակուան աւրութեան . . . . .	<b>5</b>
<i>Քաղաքացիութեան աւագուած</i>	
Սիրոյ դեղագիրը . . . . .	<b>7</b>
<i>Քաղաքացիութեան աւագուած</i>	
Վերստին ծնննող . . . . .	<b>9</b>
<i>Յունակութեան աւագուած</i>	
Յայրոսի աղջկայ յարութիւնը . . . . .	<b>11</b>
<i>Յայրութիւն աղջկայ աւագուած</i>	
Լսելու ուսակութիւնը . . . . .	<b>13</b>
<i>Ակս Տիրապ</i>	
«ԱՍՍ»-ի միսիոնարական դաշտեն . . . . .	<b>15</b>
<i>«ԱՍՍ» յանձնախումբ</i>	

Կազմի նկարը՝ հայկական քերք ու քարիք,  
յուսանկարող Շնո՞ւ Նոյեմբեր 2015թ.

## Աղօթքի եւ փառաբանութեան նիւթեր

- Փառք կուտանք Աստուծոյ Ամերիկայի միսիոնարական խումբին համար:
- Շնորհակալ ենք Յայաստանի ժողովուրդին նկատմամբ անոնց ցուցաբերած հոգատարութեան եւ սիրոյն համար: Կ'աղօթենք որ սերմանուած խօսքը շատ պսուղ քերէ:
- Փառք կուտանք Աստուծոյ ԱՍՍ-ի եւ ՄԱԾ-ի ծառայակիցներուն համար, անոնց նուիրուածութեան, ծառայութեան եւ Տէրոց նկատմամբ իրենց ունեցած սիրոյն համար:
- Կ'աղօթենք կարիքաւոր ընտանիքներու աջակցութեան ծրագիրի համար, եւ այն ընտանիքներու որոնք ամսական աջակցութեան կարիք ունին:

## Հնազանդութիւն

21-րդ դարուս մէջ այսպիսի քան մը արդեօ՞ք գոյութիւն ունի: Որպէս հաւատացեալներ եկեք Աստուծոյ Խօսքին աւելի մօտիկէն նայինք:

Մեր զաւակներուն սորուած սուրբգրային առաջին համարներէն մէկը անկասկած Եփես. 6:1-ն է, որ կ'ըսէ. «Ո՞րդիներ, ձեր ծնողներուն հնազանդ եղէք Տերոջմով, վասն զի այդ է արժանը»: Չատ մարդիկ կ'ակնկալեն որ զաւակներ հնազանդութիւն սորվին, այնուամենայնի անոնք չեն զիտակցիր որ հնազանդութիւնը ոչ միայն երեխաներու համար է այլ բոլոր մարդոց:

Հնազանդիլ քառի աստուածաշնչային քառը Յունարէն «Հուփաքու» բառէն առաջ կուգայ, որը կը նշանակէ ըսուած խօսքը ուշադրութեամբ մտիկ ընել՝ զայն կատարելու նապատակով: Ընտրութիւն կատարելու հնարաւորութիւն չկայ այստեղ, պատուերը պէտք է կատարուի, անկախ համաձայն ես կամ ոչ:

### **Աստուած հրամայեց հնազանդութիւն**

Բ Օրինաց 6.4-9-ի մէջ կը կարդանք. «Ով Խորայէլ, մտիկ ըրէ, մեր Տէր Աստուածը մի միայն Տէր է: Ու քու Տէր Աստուածդ բոլոր սրտովն, բոլոր հոգուվի ու բոլոր զօրութիւնովի սիրես: Եւ այս խօսքերը զորոնք ես այսօր քեզի պատուիրեցի, քու սրտիդ մէջ ըլլան ու զանոնք քու որդիներուդ կրկին և կրկին անգամ սրվեցնես, և թէ՛ տանդ մէջ նատած ատենդ, թէ՛ ճամբայ քալած ատենդ, և թէ՛ պառկելու ու ելլելու ատենդ անոնց վրայով խօսիս, և զանոնք նշանի համար ձեռքիդ վրայ կապես, ու ճակատնոցի համար աչքերուդ մէջտեղը ըլլան, նաև անոնք քու տանդ դրանդիքներուդ վրայ և դրներուդ վրայ զրես»:

Կող. 3.22-ը կ'ըսէ. «Ծա՛ռաներ, ամէն քանի մէջ հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերուն, ոչ թէ աչքի առջեւ ծառայելով մարդահաճոներու պէս, հապա սրտի միամտութեամբ՝ Տերոջմէ վախնալով»:

Սենք որպէս հաւատացեալներ պէտք է հնազանդ ըլլանք Աստուծոյ եւ հեղինակութիւններուն:

Ա Թագ. 15.22-ի մէջ Սամուէլ կ'ըսէ. «Սիթէ Տերոջը առջեւ ողջակէգ-

ներն ու զոհերը Տէրոջը ձայնին հնազանդութիւն ընելու չափ հաճո՞յ են: Ահա հնազանդութիւնը զոհէն ու խօսք մտիկ ընելը խոյերուն ճարպէն աղէկ է»:

Աստուած կը քննէ մեր հնազանդութիւնը ու կը դիտէ թէ որքանով Իր խօսքին հնազանդ ենք:

Յովի. 15.14-ի մէջ Յիսուս ըսաւ. «Դուք իմ բարեկամներս էք, եթէ ընելու ըլլար ինչ որ ես ծեզի կը պատուիրեմ»:

Որպէս հաւատացեալներ, ամէն օր պէտք է հետեւինք Աստուծոյ եւ Յիսուս Քրիստոսի պատուիրաններուն, առանց որեւէ բացառութիւններու:

### **Անհնազանդութեան պատճառով օրհնութեան կորուստ**

Չատ հաւատացեալներ անցեալի մէջ, եւ նաեւ օրերս Աստուծոյ օրհնութիւնը կորսնցուցած են իրենց անհնազանդութեան պատճառով:

«Քանզի ամէն մէկուն իր գործերուն փոխարէնը պիտի հասուցնէ. յախտենական կեանք անոնց, որոնք բարի գործերու մէջ համբերութեամբ յարատենելով փառք ու պատի եւ անմահութիւն կը խնդրեն. Բայց անոնց՝ որ հակառակ են եւ ճշմարտութեան անհնազանդ ու անիրաւութեան հնազանդած՝ պիտի ըլլայ բարկութիւն եւ սրտմտութիւն» (Հոռվմ. 2.6-8):

### **Հնազանդութեան պարզեները**

«Քեզ օրհնելով պիտի օրհնեմ ու քու սերունդդ երկնքի աստղերուն ու ծովեզերքը եղող աւազին պէս խիստ պիտի շատցնեմ եւ քու սերունդդ իր թշնամիներուն քաղաքները պիտի ժառանգէ ու երկրի բոլոր ազգերը քու սերունդովդ պիտի օրհնուին, որովհետեւ իմ ձայնիս ականջ դրիր»» (Ծննդոց 22.17-18) (Աստուած կը խօսի Աքրահամին հրեշտակի միջոցով):

«Զըլլայ որ մէկը ձեզ խարէ փուճ խօսքերով, վասն զի այս բաներուն համար Աստուծոյ բարկութիւնը կու զայ անհնազանդութեան որդիներուն վրայ» (Եփես. 5.6):

Հ. Գ.

## Քու առաջուան սէրդ ձգեցիր (Յայտ. 2:4)

**Ե**փեսու այդ ատենները Հռովմէական նահանգին մայրաքաղաքն էր: Հոն էր Արտեմիս կամ Անահիտ չաստուածուիին մեհեանը, որ 220 տարուան մէջ շինուած էր, եւ աշխարհի եօթը հրաշալիքներէն մէկը կը համարուէր:

Պողոս առաքեալ հոս հիմնեց եկեղեցի մը, որուն մէջ աշխատեցան Ակիւղաս, Պրիսկիղա, Տիմոթէոս եւ Յովհաննէս առաքեալ: Կ'ըսուի թէ Յովհաննէս իր կեանքին վերջին մասը հոս անցուց եւ հոս գրեց իր Աւետարանը: Պատմոս կղզին վերադարձաւ Եփեսու եւ հոն ննջեց 94 տարեկանին, ըստ պատմիչներու: Առաքեալը հոն սէր կը քարոզէր: Երբ շատ ծերացած էր եւ չէր կրնար երկար քարոզներ տալ, ժողովուրդին կ'ըսէր. «Որդեակնե՞ր, մէկզմէկ սիրեցէր»:

Աւելին կայ, Յիսուս՝ Ինք այս եկեղեցիին մէջ կը պտղտէր ու անոր հրեշտակը՝ հովիլը իր աջ ձեռքին մէջ կը բռնէր (Յայտ. 1.20): Ան Եփեսոսի եկեղեցիին մէջ կը պտղտէր ու գիտէր անոր առաւելութիւններն ու թերութիւնները: Զայն կը քաջալերէր ըսելով. «Գիտեմ քու գործերը եւ քու աշխատութիւնդ ու քու համբերութիւնդ եւ որ շարերուն չես կրնար տանիլ ու փորձեցիր զանոնք որ կ'ըսեն թէ իրենք առաքեալ են ու չես եւ գտար թէ ստախոս են: Համբերութիւն ունենալով՝ նեղութիւն կրեցիր ին անուանս համար՝ ու չըուցար» (Յայտ. 2.2-3): Ի՞նչ օրհնեալ եկեղեցի, երանի անոր ամայամներուն, որ Տէր Յիսուսէն այսպէս կը վկայուիմ: Բայց աւա՞ղ: Երանի թէ Յիսուս հոս վերջացնէր: Ան կը շարունակէ ցաւլ սրտին, կ'ուզէ սրափեցնել զանոնք, մատը դնելով ճիշդ անոր վերքին վրայ. «Բայց քեզի դէմ բան մը ունիմ: Քու առաջուան սէրդ ձգեցիր» (Յայտ. 2.4): Շատ բաներ ունիս բայց սէր չունիս: Մարդոց ու հրեշտակներու լեզուներ ունիս, լեռներ տեղափոխող հաւատը ունիս, բայց սէր չունիս, ոչինչ ես: «... Ու սէր չունենամ ոչինչ եմ» (Ա Կորնք. 13.2):

Եփեսոսի եկեղեցին առաջուայ օրերուն մէջ Ա Կորնք. 13-րդ գլխուն մէջ յիշուած սէրը ունէր, իսկ հիմա չունի, ձգած է: Ուզելո՞վ, գիտնալո՞վ, անզգուշաբար թերեւս: Սէրը երկայնամիտ է, սէր չկայ, երկայնա-

մտութիւն չկայ, քաղցրութիւն չկայ, նախանձ կա, գոռողութիւն եւ հպարտութիւն կայ, անվայել վարմունք, իրենը փնտորել կայ....: Սարսափելի վիճակ: Խե՞ դժ եկեղեցի, առաջին սէրդ ձգելով մակերեսային վիճակ մը ստացած ես: Առաջին սէրդ ձգեցիր, ինկար: Աստուած սէր է: Եթէ սէր չունիս, Աստուած չունիս, եթէ Աստուած չունիս բան մը չունիս, բան մը չես, ոչինչ ես:

Առաջին սէրը վերստանալու համար, Տէր Յիսուսը երեք բաներ կը թելադրէ Եփեսոսի եկեղեցիին. 1. «Սիտքդ քեր ուրկէ ինկար». Խորիէ վիճակիդ վրայ եւ գիտցիր որ ինկած ես: 2. «Ապաշխարէ», առաջին սիրոյդ դարձիր: 3. «Առաջին գործերդ ըրէ», ապաշխարութեան պտու թեր: «Եթէ ոչ, շուտով կուգամ քեզի ու քու աշտանակդ իր տեղէն պիտի շարժեմ» (Յայտ. 2.5): Ուրիշ քարզմանուրեան մէջ կ'ըսէ. «Պիտի վերցնեմ», պիտի ձգեմ: Աստուած Իր խոստումներն ու զգուշացումները անպայման կը կատարէ: Կ'երեւի Եփեսոսի եկեղեցին իր առաջուան սէրը չկրցաւ գտնել, ինկած մնաց: Հիմա այն շաստուածներու քաղաքին տեղը աւերակ ու անապատ է եւ այն նաւահանգիստը ուր նաւով կուգային Պօղոս եւ Յովհաննէս առաքեալները՝ ճահիճ մըն է:

Ի՞նչ մեծ ցաւ է Տէր Յիսուսի սրտին: Ան՝ առաջին սէրը ձգող եկեղեցիներուն կ'աղաղակէ ու կ'ըսէ. «Ան որ ականջ ունի թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն», քեզի եւ ինծի: Տէր Յիսուսի կոչին անսալով յաղթողներուն խոստումներ կան. Երկրորդ մահէն շնչառուելու, ճերմակներ հազնելու, Աստուծոյ տաճարին մէջ սիւն ըլլալու, Աստուծոյ արռոին վրայ նստելու, Կենաց պսակը առնելու, պահուած մանանայէն ու Կենաց ծառէն ուտելու:

Անսուտ են այս խոստումները սիրոյ մէջ մնացող յաղթող եկեղեցիներուն, քեզի եւ ինծի:

Քաղուած

**«Երանի անոր, որուն յանցանքներուն թողութիւն եղաւ ու անոր մեղքերը ծածկուեցան: Երանի այն մարդուն որուն՝ Տէրը անօրէնութիւն չի սեպեր ու անոր Հոգիին մէջ նենգութիւն չկայ» (Սաղմոս 32.1-2):**

## Միրոյ դեղագիրը

**Ե**րկար տարիներ առաջ Զինաստանի մէջ, Լիլի անունով աղջիկ մը ամուսնացաւ եւ կեսուր մօրը հետ ապրելու ստիպուեցաւ: Կարձ ժամանակի ընթացքին յայտնի եղաւ որ շատ դժուար էր նոյն տան մէջ համերաշխ ապրիլ, որովհետեւ հարս ու կեսուր շատ տարբեր անձնաւորութիւններ ունեին: Լիլին կը բարկանար կեսուր մօրը շատ մը սովորութիւններէն: Առաւել տարեց կինը միշտ կը քննադատէր երիտասարդ հարսը:

Օրեր, շաբաթներ անցան եւ կոհին ու վիճաբանութիւնը անպակաս էին տան մէջ: Պարագան աւելի գէշ էր, քանի որ ըստ Զինական հին սովորութեան, հարսը միշտ հնազանդելու էր կեսուր մօրը՝ անոր կամքը կատարելով:

Վերջապէս Լիլին չկրցաւ դիմանալ եւ որոշեց դիմել հօրը մէկ բարեկամին, պարոն Հուանկին, որ բոյսեր կը վաճառէր: Ան բացատրեց իր պարագան եւ խնդրեց բոյն մը գնել այս հարցը վերջնականապէս լուծելու համար:

Պարոն Հուանկ պահ մը մտածեց եւ վերջապէս ըսաւ. «Լիլի, պիտի օգնեմ քեզի որ հարցդ լուծես, բայց պէտք է ինձի մտիկ ընես եւ պատուիր կատարես»:

Ապա իմաստուն բուսագէտը ծրար մը յանձնեց հարսին եւ բացատրեց ըսելով. «Ամէն օր պէտք է համով ճաշ մը պատրաստես եւ կեսրոջդ պնակին մէջ այս բոյնէն քիչ քիչ դնես, որ իր մարմնին մէջ տեղաւորուի: Կասկածի տեղի շտալու համար, շատ զգոյշ ըլլալու ես եւ սիրով վարուելու ես հետը, առանց վիճելու, հնազանդ եղիր եւ թագուհիի պէս յարգէ զայն մինչեւ որ բոյնը զայն մեոցնէ»:

Լիլի ուրախութեամբ վերցուց բոյսերու ծրարը եւ տուն փութաց գործադրելու կեսուր մայրը մեոցնելու դաւադրանքը:

Շաբաթներ եւ ամիսներ անցան: Ամէն օր Լիլի յատուկ ճաշեր հրամցուց կեսուր մօրը: Ան յիշեց Պարոն Հուանկին կասկածելի չըլլալու պատուերը, եւ զավեց իր բարկութիւնը ու հնազանդեցաւ կեսուր մօրը անոր հետ իր մօրը պէս վարուելով:

Վեց ամիս անցնելէ վերջ, տան ամբողջ մթնոլորտը փոխուեցաւ: Լիլին այդքան լաւ սորվեցաւ զապել ինքզինք որ երբեք վիճաբանութիւն չկար տանը մէջ, այլ միայն քաղցրութիւն:

Կեսուր մօրը վերաբերմունքն ալ փոխուեցաւ հարսին հանդէպ եւ սկսաւ իր աղջկան պէս սիրել Լիլիին: Ան իր բարեկամներուն կ'ըսէր թէ իր հարսը լաւագոյնն է: Անոնք իրարու հետ կը վերաբերէին որպէս մայր ու աղջիկ: Լիլիին ամուսինը շատ ուրախ էր պատահածը տեսնելով:

Օր մը՝ Լիլին նորէն գնաց բուսագէտի մօտ եւ խնդրեց անկէ որ կասեցնէ թոյնին ազդեցութիւնը. «Զանի որ»- ըսաւ ան - «հիմա կեսուր մայրս այդքան ազնի եղաւ, որ զիմք մօրս պէս կը սիրեմ եւ չեմ ուզեր թոյնին պատճառով մահանայ»:

Տիար Հուանկ ժափտով գլուխը շարժեց եւ ըսաւ. «Լիլի, մտահոգիչ բան չկայ: Ես քեզի երբեք թոյն չտուի: Այս բոյսերը վիթամիններ էին, որ իր առողջութիւնը բարելաւուի: Միակ թոյնը քու մտքիդ եւ վարմունքիդ մէջ էր: Սակայն այդ բոլորը չէզոքացան այն սիրով, որ դուն ցոյց տուիր կեսուր մօրդ»:

Արդեօք անդրադա՞ծ ես թէ ինչպէս որ ուրիշներուն հետ կը վերաբերիս, ճիշդ նոյն ձեւն է որ անոնք կը վերաբերին քեզի հետ: Չինական իմաստուն խօսք մը կայ որ կ'ըսէ. «Այն անձը որ ուրիշները կը սիրէ, փոխադարձ նոյնպէս պիտի սիրուի»: Կրնայ ըլլալ որ Աստուած կը փորձէ քու միջցողով ուրիշի մը կեանքը փոխել:

Պօղս առաքեալ այսպէս կը յորդորէ մեզ. «Սէրը առանց կեղծաւութեան ըլլայ, չարէն զզուելով, բարիին յարելով: Եղբայրսիրութեան մէջ իրարու գորովալից եղէք. պատուելու մէջ իրարմէ անցէք. զանքի մէջ թուլափրտ մի՛ ըլլաք. Հոգիով բորբոքեցէք. Տերոջը ծառայեցէք. յոյսով ուրախ եղէք. նեղութեան մէջ համբերեցէք. ստէպ աղօքքի կեցէք» (Հռովմ. 12.9-12):

Քաղուած «Բարեպատուղ ձիթենին» գրքէն



# Վերստին ծնունդ

## Յովհաննու 3:1-16

**Ս**իկողէմոս՝ հրեայ իշխան մը, Յիսուսի եկաւ, վերստին ծնունդի մասին հարցումներ ընելով: Այս գլխուն մէջ երեք բաժանմունքներու մասին պիտի խորհրդածենք - Աստուծոյ Որդուն, Աստուծոյ Խօսրին եւ Աստուծոյ արտին:

Նախ կ'ուզեմ յիշել թէ Յիսուս իրապէս ո՞վ էր: Երբ Նիկողէմոս Յիսուսի հետ կը խօսէր, յատուկ բան մը նշմարեց Անոր մէջ - «Մէկը չի կրնար ընել այն հրաշքները, որոնք դուն կ'ընես, եթէ Աստուած իրեն հետ չըլլայ»: Յիսուս Աստուծմէ եկած էր, Աստուծոյ Որդի էր եւ զիտէր ու կը ճանչնար ամէն անձ: Յիսուս Նիկողէմոսի կ'ըսէ. «Երէ երկրաւոր բաները ձեզի ըսի ու չէր հաւատար, ինչպէ՞ս պիտի հաւատար երէ երկնաւոր բաները ձեզի պատմեմ»: 17-րդ համարը կ'ըսէ թէ «Աստուած իր Որդին չըրկեց աշխարհ, որպէս զի աշխարհը դատէ, հապս որպէս զի աշխարհ անով փրկուի»: Ան երկնքէն եկաւ ու ամենէն վեր է: Ինչ որ տեսաւ ու լսեց, զայն կը վկայէ, վասն զի զԱյն որ Աստուած դրկեց Աստուծոյ Խօսքը կը խօսի: «Ինչ որ զիտենք՝ կը խօսինք եւ ինչ որ տես-սանք՝ կը վկայենք ու մեր վկայութիւնը չէր ընդունիր»: Ուրեմն պատգամը այս է որ Յիսուս Աստուծմէ է եւ Աստուծոյ Որդի է, եւ այս մեզի համար բար է որ Իր առջեւ ծունկի գանք, երկրպագենք եւ Իր Խօսքը ընդունինք: Աստուած՝ մեր Ստեղծիչը Իր Որդինվը մեզի խօսեցաւ: Անիկա եկաւ աշխարհ մը որ կասկածով, անհաւատութեամբ եւ խարկանքով լեցուն էր: Բայց Աստուած խօսեցաւ Իր Որդինվը:

Յիսուս Նիկողէմոսի ըսաւ, որ երէ մէկը նորէն չծնանի Հոգիէն, Աստուծոյ բազաւորութիւնը չկրնար մտնել: Ուրեմն պայման մը, ճամբայ մը կայ եւ դժբախտաբար շատեր կ'ուզեն տարբեր միջոցներով կամ ճամբաներով Աստուծոյ բազաւորութիւնը մտնել: Բոլորս հաւասար ենք Աստուծոյ առջեւ եւ մեռնելու ու կորստեան դատապարտուած ենք եթէ վերստին չծնանինք: Նիկողէմոս կը զարմանայ թէ ինչպէս ծերացած անձ մը կրնայ նորէն ծնիլ, սակայն Յիսուս կը պատասխանէ որ Հոգիէն ծնանիլ պէտք է: Մարմնէն ծնածը մարմնին է, եւ Հոգիէն ծնածը հոգի է: Յիսուս զայս կը նմանեցնէ հովին որ ուր ուզէ կը փշէ, անոր ձայնը կը

լսես բայց չես գիտեր ուրկէ կուգայ, միայն գիտես թէ ինչ հետեւանք եւ ազդեցութիւն կը ձգէ երք փչէ ու անցնի: Նոյնպէս ալ երք վերստին կը ծնինք Հոգիէն մեր կեանքերը նոր ազդեցութիւն կ'ունենան: Երք Հոգիէն կը ծնինք, Աստուծոյ հանդէպ փափաք մը կ'արթննայ մեր մէջ, տարբեր հոգի մը կ'ունենանք եւ մեր կեանքերով աստուածային ազդեցութիւն մը կը ձգենք ուրիշներու վրայ: Եւ վերջապէս այս բոլորը իրականութիւն կը դառնան երք Աստուած Իր սրտով կը յայտնուի մեզի: Ամենազէտ Աստուած երբեք ի մտի չունէր մեզ յանդիմանել կամ պախարակել, հապա Ան այնպէս սիրեց աշխարհը որ մինչեւ Իր միածին Որդին տուաւ: Ան խոնարհեցաւ եւ զիջեցաւ վիշտ ու ցաւ կրելու, մարդոցմէ մերժուելու, առանձին մեռնելու ամենավատ կերպով, նոյնիսկ խաչին վրայ աղաղակեց Իր Հօրը. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր»: Աստուած որ այնչա՞փ գիտէ մեր մասին, այնչա՞փ սիրեց մեզ, ես ալ այնչա՞փ կը հաւատամ:

Փոքր եղած ատենս կը յիշեմ հայրս որ հեռաձայնի գրասենեակի մը պատասխանատուն էր: Երք կ'այցելէի զինք կը հիանայի դիտելով ելեկտրական գործիքներն ու լարերը: Հայրս կը զգուշացնէր զիս որ չմօտենամ վտանագաւոր լարերուն, կը հաւատայի եւ կը հնազանդէի իրեն: Շատ անգամ ծնողքս կը կրթէր եւ կը զսպէր զիս, սակայն գիտէի որ իմ բարիքիս համար կ'ընեն: Իրենց հոգատարութիւնը եւ սէրը այնպէս վայելած էի, որ իրենց եւ իմ միջեւ սիրոյ յարաբերութիւն մը, հաղորդակցութիւն մը կար: Հայրս լաւ գիտէի եւ անոր համար կը հնազանդէի եւ կը հաւատայի որ լաւագոյնը կ'ուզեն ինձի համար: Որչա՞փ աւելի մեր Երկնաւոր Հայրը մեզ կը սիրէ, Իր Որդին դրկեց որ գիտէր թէ՝ երկնիքի եւ թէ՝ երկրի բաները: Մեր սիրտը գիտէ, մեր խորհուրդները գիտէ, մեր պէտքերը գիտէ եւ նամանաւանդ մեր յախտենական պէտքը զիտէ եւ կը խօսի մեզի Իր Որդույն միջոցաւ այն խօսքերը որ պէտք ունինք լսելու – նոր ծնունդ մը Հոգիով, ապաշխարութիւնով, Աստուծոյ առջեւ խոնարհելով, մեր մեղքերը խոստովանելով եւ Իրեն մեզի ըրածին հաւատալով, մեր սրտերը բանալով, Իրեն յանձնուելով, այն ըսելով, որպէսզի կարենանք մտնել Իր մեծ քագաւորութիւնը:

Վեր. Ֆրէտ Ֆօրսթը  
Քաղուած՝ «Հատընտիր հոգեւոր պատզամներ» գրքն

## Յայրոսի աղջկայ յարութիւնը

**Մարկոս 5.21-43, Ղուկաս 8.50-56**

**Հ**այրը, մայրը, հարազատները, 12 տարեկան աղջկայ անկողինի շուրջը հաւաքուած կը դիտէին աղջկան ով կը տանջուէր. թերեւս մի քանի օր հիւանդ պառկած էր, անոր վիճակը իսկապէս ծանր էր:

Հայրը՝ Յայրոսը ժողովարանի պես էր: Ան հաստատ Յիսուսի մասին լսած էր: Այդ օրը թերեւս անձամբ մտածեց, կամ գուցէ կինը կամ բարեկամներէն մէկը խորհուրդ տուին զինք, որ երբայ Տէր Յիսուսին գտնէ ու տուն թերէ: Յայրոսը կրնար իր բարեկամներէն որեւէ մէկուն խնդրել, պատճառաբանելով թէ ինք չէր ուզեր իր աղջկայ քովէն հեռանալ: Բայց այդպէս չրուա: Կեսնքի ու մահուան հարցը որիշին չվստահեցաւ: Այս վճռական պահուն անձամբ որոշեց երթալ ու գտնել Յիսուսին, քանի որ ամբողջ սրտով պիտի փնտռէր:

Յայրոսը տունէն դուրս եկաւ հարցականներով լի. արդեօ՞ք վերջին անգամն էր, որ իր աղջկան պիտի տեսնէր, արդեօ՞ք երբ վերադառնար արդեն ուշ պիտի ըլլար, արդեօ՞ք Յիսուսին պիտի գտնէր, արդեօ՞ք Ան պիտի համաձայնէր իր տուն գալ: Ծփորթուած եւ վախը սրտին մէջ քայլերը արազցուց: Վերջապէս կը գտնէ Տէր Յիսուսին, ինչպէս միշտ՝ բազմութեան մէջ, մարդկանցով շրջապատուած: Ժողովրդապէտ ըլլալով հանդերձ համարձակութիւն ունեցաւ ու բոլորի առջև ծունկի գալով Յիսուսէն խնդրեց իր տուն գալ՝ ըսելով. «Իմ աղջիկս մեռնելու մօտ է, եկոնք, անոր վրայ ձեռք դիր, որպէս զի ազատի ու պիտի ապրի» (Մարկ. 5.23):

Ծամբուն մէջ բազմութիւնը կը նեղէր Յիսուսին, Յայրոսի գործը երթալով կը դժուարանար: Յանկարծ 12 տարի արիւնահոսութիւն ունեցող կին մը դպաւ Տէր Յիսուսի հանդերձին ու բժշկուեցաւ: Այդ պահուն Յիսուսը կանգնեցաւ ու հարցուց, թէ ով զինք դպաւ: Յայրոսի համար ասիկա ժամանակի կորուստ էր, անցանկալի միջադէպ, իւրաքանչիւր վայրկեանը սուու էր, սակայն Յիսուսի համար ասիկա Յայրոսին ուսուցանելիք թանկագին դաս մըն էր, որ ան իր ամբողջ սրտով հաւատար զինքը:

Յայրոսի աչքերուն առջեւ հրաշք կատարուեցաւ: Ան սկսաւ աւելի

հաւատալ, երբ տեսաւ այդ կնոջ հետ կատարուածը: Ան իր սրտին մէջ յիշեր սկսաւ փայփայել. «Ա իս, երանի՝ առջիկս քիչ մը եւս դիմանայ, ահա 12 տարուայ հիւանդին քժշկեց, աղջկաս ալ հարկաւ կը կարողանայ քժշկել»: Դարձեալ ոսքերնին ուղղեցին դէպի Յայրոսի տունը: Ծատ չանցած անոր տունէն մարդիկ եկան ու իրեն յայտնեցին այս լուրը, որը երբեւէ ոչ մէկ հայր չէր ուզեր լսել: «Են լուրը չլսած՝ Յայրոսը անոնց երեսի արտայայտութենէն հասկցած պիտի ըլլար, որ աղջիկը մահացած էր: Այդ պահուն Յայրոսի զգացումները զագարնակէտին հասան. կարծես մտքեր կուգային թէ ինչու աւելի շուտ զգտաւ Տէր Յիսուսին, կամ ինչու այդ կինը ժամանակը ի զուր տեղը կորսնցու, բռլոր ջանքերը ապարդին եղան, տուն երթայ կնոջը երեսին ինչպէ՞ս նայի, ի՞նչ ըսէ....: Ճիշտ այդ պահուն Յայրոսի շփոթութիւնն ու տըրտմութիւնը Տէր Յիսուսի մէկ քաղցր խօսքով կը փարատուի. Յիսուս անոր կ'ըսէ. «Մի՛ վախնար, միայն հաւատա»: Ի՞նչ օրինեալ է մեր Տէրը, որ կը հասնի մեզ եւ կը խօսի մեզ հետ մեր ամենադժուար պահերուն մէջ:

Մեր կեանքը լի է վախերով, իսկական վախերով: Կը թուայ թէ ամէն ինչ կորսնցուցինք ու անիմաստ եղաւ ամբողջ շարչարանքը, զոհողութիւնը, բայց Տէրը կ'ըսէ. «Մի՛ վախնար, միայն հաւատա»: Հետաքրքրական է, որ կ'ըսէ. «Մի՛ վախնար»: Աղջիկը արդեն մահացած էր, վախնալը այլեւս ի՞նչ իմաստ ունէր: Ինչո՞ւ Յիսուս անոր ըսաւ որ չվախնայ: Այդպէս ըսելով Յիսուս ջորի երես հանեց Յայրոսի սրտին մէջ եղածը: Յայրոսը տունէն դուրս ելլելուն պէս եւ Յիսուսի հետ քալած ամբողջ ճամքու ընթացքին ան կը վախնար, որ իր աղջկան պիտի կորսնցնէր, կը վախնար, որ երբ Յիսուսին տուն հասցնէր, արդեն աղջիկը մահացած պիտի ըլլար: Յորի խօսքերը կարծես թէ կը համընկնէին Յայրոսի սրտի իրավիճակին, երբ Յոր կ'ըսէ. «Ինչ քանէ որ շատ կը վախնայի, այն ինծի հանդիպեցաւ, եւ ինչ քանէ որ երկիր ունէի, այն ինծի հասաւ» (Յոր 3.25): Սակայն Յիսուսը կրնայ նոյնիսկ մահացածին վերակենդանցնել, ինչին Յայրոսը դժուար թէ կը հաւատար այդ պահուն:

Համոզուած եմ, որ եթէ աղջիկը մահանար, քանի դեռ հայրը տունն էր, ան դժուար թէ տունէն հեռանար Յիսուսին գտնելու համար, ան աւելի պիտի սկսէր մտածել քաղման արարողութեան մասին, քան Յիսուսին գտնելը: Ան սունամացի կնոջ հաւատքը չունէր, որ երբ իր միակ

զաւակը մահացաւ, գնաց ու Եղիսէ մարգարէին գտաւ ու տուն բերաւ (Դ. Թագ. 4.18-37): Յայրուար ժողովորապես էր ու պէտք է ծանօթ ըլլար Հին Կտակարանի այդ պատմութեանը, բայց այդ պահուն ան շփորուած էր, քանի որ սրտին մէջ վախը տարածուած էր: Վախը եւ կասկածը կը խանգարէ մեզ որ Աստուծոյ վատահինը:

Յայրոսի ճամբայ ելլելը կրնանք երեք մասի բաժնել: Առաջինը՝ իր դուրս գալու պահէն մինչեւ Յիսուսին գտնելը: Այստեղ ան կը մտածէր, թէ Յիսուսին պէտք է գտնի ու նախքան իր աղջկայ մահանալը տուն հասցնէ: Երկրորդը՝ Յիսուսին գտնելու պահէն մինչեւ իր աղջկայ մահանալու լուրը ստանալը: Այստեղ ան ինչ որ չափով յոյս ունէր, եւ կը շտապէր որ Յիսուսին վայրկեան առաջ տուն հասցներ: Իր մտքին մէջ կը մտածէր թէ զործին կէսը կատարած էր, Յիսուսին արդեն գտած էր, մնացեր էր տուն հասցնել: Եվ երրորդը՝ մահուան լուրը ստանալու պահէն մինչեւ տուն հասնիլը: Այստեղ արդեն ուրիշ տեսակի յոյս էր, որը աւելի ձեւակերպուելով դարձած էր կենդանի հաւատք, հաւատք Յիսուսի խօսքի նկատմամբ: Սա էր, ինչ Յիսուսը կը փնտուէր ու կուզէր Յայրոսէն: Արդիմքը այն եղաւ, որ Յիսուս պատուեց Յայրոսի հաւատքը, եւ Իր ողորմութեամբ վերակենդանացուց աղջկան:

Արդեօք հիանալի չէ այսպիսի Փրկիչ մը ունենալը, ով միշտ մեր կողքին է, մեզ կը հասկնայ եւ քաղցրութեամբ կը վարուի մեզ հետ եւ կ'օգնէ որ զինք ամբողջ սրտով հաւատանք:

Վարդան Սարգսիսեան

## **Լսելու ունակութիւնը**

**Ե**րբեւ ձեզի հետ պատահ՝ է այնպիսի դէպք մը, երբ ընկեր մը ձեզի հետ իր խնդիրի մասին խօսելու ժամանակ ձեր միտքը սկսած է ձեր յիշողութիւնն ու փորձառութիւնը պրատել օգտակար խորհուրդ մը կամ մեկնաբանութիւնն մը ընելու համար: Սակայն չկարողանալով իրայատուկ եւ խորաթափանց միտք մը առաջարկել, դուք ձեզի անօր եւ անընդունակ զգացած էք ձեր ընկերոց կարիքը բաւարարելու հարցին մէջ: Վերջապէս ձեր ընկերը կ'ըսէ. «Ծատ շնորհակալութիւն

օգնութեան համար, իհմա ինձի շատ աւելի լաւ կը զգամ»: «Դուք կը մնաք շփոթուած. «Ես ի՞նչ օգուտ տուի իրեն... հազի թէ բառ մը արտաքերեցի»: Մենք կը շփոթուինք եւ նոյնիսկ կը զարմանանք, եթի ինչ որ կերպով մը մէկու մը օգնած կ'ըլլանք՝ առանց որեւէ բառի: Անզամ մը հրաշալի գիրք մը կարդացի «Լսող սրտի զարմանահրաշ ուժը» խորագրով: Ասիկա հրաշալի արտայայտութիւն մըն է, որուն կարելի է անդրադառնալ: Այն ինձի կը յիշեցնէ Յակոբոսի բառ մէկ խօսքը. «Ամէն մարդ թող արագ ըլլայ լսելու մէջ...» (Յակ. 1:19):

Եթի խօսողի դերի մէջ ենք, մենք մեր խօսքերով, գաղափարներով, մտահոգութիւններով, դատողութիւններով եւ կարծիքներով մուտք կը գործենք դիմացինի ներաշխարի: Եթի լսողի դերի մէջ ենք, ապա կարծես թէ խօսողին բառ կ'ըլլանք. «Դուն իհմա աւելի կարեւոր ես, բան օրակարգի ցանկացած այլ կէտ: Իմ կարծիքս, իմ մտքերս կը դնեմ մէկ կողմ եւ իմ ամքող ուշադրութիւնս քեզ կուտամ»: Շշմարիտ լսելու դատապարտելէ զորիկ է: Այն ոչ մէկ պարագային դիմացինին չ'ըսէր թէ ինչպէս ինքը իրեն պէտք է «զգայ», կամ ինչ «պէտք է ընել»: Լսելու ունակութիւնը բաց սրտի, ապահով միջավայրի եւ ընդունելութեան մըքնուրու է: Լսելու քրիստոնէական սէր փոխանցելու հզոր միջոց է: Պարզ փաստարկ է, որ մարդիկ, եթի կը զգան, որ իրենց բաածին ինչ որ մէկը ուշադիր կը լսէ, ապա իրենք իրենց սիրուած եւ հասկացուած կը զգան: Քրիստոսի լսելու դասական օրինակներէն մէկը Էմմառուի ճանապարհի պատմութեան մէջ կը տեսնենք: Քրիստոս լսեց Իր երկու հետեւորդներու յուսահատութիւնն ու շփոթմունքը. «Յիսուս՝ ինքն ալ մօտենալով՝ անոնց հետ կ'երթար» (Ղուկ. 24:15):

Կը խորիհմ թէ, աւետարանական քրիստոնէաների մէծ մասը պիտի չկրնար դիմակայել անմիջապէս «զրոյցի» բռնուելու եւ սպասիչ «պատասխաններ» տալու գայթակղութեանը: Տարօրինակ է, Յիսուսը այդպէս չըրաւ: Ան հարցեր տուաւ եւ այդ երկու աշակերտներուն իրենց շփոթուած վիճակէն դուրս հանեց եւ մտիկ ըրաւ անոնց, մինչ անոնք իրենց սրտի վիշտը կը կիսուէին Իր հետ: Միայն լսելէ յետոյ կը կարդանք որ Ան սկսաւ Սովուէն ու բոլոր մարգարէներէն սկսած՝ մեկնել անոնց, ինչ որ Գիրքերուն մէջ զրուած էր Իր մասին (Ղուկ. 24:27):

Ինձի կը թուայ թէ մենք աւելի ունակ ենք խօսելու քան լսելու: Մենք շատ բան ունինք լսելու. ի վերջոյ, կը կարծենք, որ մարդկանց բոլոր

խնդիրներու պատասխանները ունինք: Ապրելով աշխարհի մը մէջ, ուր իրաքանչիլր որ պատասխաններ կը փնտո՞ւ, պատասխաններ ունեցո՞ղի համբաւ ունենալը բաւականին գրաւիչ կը հնչէ: Այնուամենայնիւ, եթէ կուզենը հետեւիլ Յակոբոսի ուսմունքին եւ Քրիստոսի օրինակին, ապա պէտք է ձեռք բերենք լսելու ունակութիւնը: Առակաց գիրքի իմաստուն հեղինակը ըստ. «Ո՞վ որ բան մը չլսած պատասխան կու տայ, յիմարութիւն ու նախատինք է իրեն» (Առակ. 18.13):

Եթէ երբեւ գտնուած էր այնպիսի անձի մը կողքը, ով պարզապէս լրութեամբ մտիկ լրած է ձեզ, ապա կիմանաք թէ ինչ նկատի ունիմ: Լսելը հզօր է, թժկող հմտութիւն է: Երբ կը ճախողինք այդ դրսեւորել եկեղեցական կամ լնտանեկան կեանքին մէջ, ապա մեր հարաբերութիւնները կը տուժեն եւ որիշներուն օգնելու կարողանալու մեր ունակութիւնը խիստ կը սահմանափակուի:

Կենդրոնացած, ուշադիր եւ սրտանց լսելը կը պահանջէ կարգապահութիւն եւ զրոյնութիւն, բայց այդ հզօր միջոց է դիմացինին ըսելու. «Դուն իման համար մեծ նշանակութիւն ունիս»:

Ուրս Տիրլավ

## **«ԱՍՍ»-ի միսիոնարական դաշտէն**

«Հայ քրիստոնէական առաքելութիւն»-ը հաւատքի առաքելութիւն մըն է, որը աշխարհի տարբեր կողմերէն հովանաւորողներ եւ կամաւրներ ունի, որոնք կ'աջակցին մեզ իրենց աղօքբներով, լրամական միջոցներով, անձամբ ներկայ գտնուելով եւ ֆիզիկապէս օգնելով մեզ տարաբնոյք աշխատանքներու մէջ, ինչպէս նաև միանալով մեզ Հայաստան եւ Արցախ կատարած մեր միսիոնարական ծառայութիւններուն ժամանակ:

Այս, մենք իսկապէս շնորհակալ ենք բոլոր անոնց, որոնք մեզ համար աղօքեցին եւ Տերը Իր շնորհքով մինչեւ այստեղ մեզի հասցուց:

Ուրախ ենք յայտարարելու, որ շուտով հնարաւորութիւն պիտի ունենար մեր գործունէութեանը հետեւիլ առցանց՝ [www.acmaust.org](http://www.acmaust.org) կայքի միջոցով:

Ըստ մարդիկ կը հարցնեն մեզի, թէ որո՞նք են ամենանիրաժեշտ կարիքները:

Մեր գլխաւոր նպատակն է օգնել խիստ կարիքի մէջ գտնուող ընտանիքներուն, անոնց Աւետարանը փոխանցել, հոգեւորապէս օգնել, աղօթել իրենց հետ եւ իրենց համար, հոգալ անոնց առողջական խնդիրները եւ դեղորայքի ծախսերը, ընտանիքներու համար սնունդ գնել, նորածիններուն կաթով ապահովել, վճարել ելեկտրականութեան եւ տան վարձի գումարները:

Ամսական 100 տոլարը բաւարար է, որ մէկ ընտանիքի մը կարողանանք օժանդակել: Մեր ցանկին մէջ այսպիսի շատ կարիքաւոր ընտանիքներ կան, եւ մեզ համար շատ դժուար է անոնց մերժելը: Մեր աղօթըն է, որ Տէրը օգնէ թեզ որ կարողանաս այս ծառայութեան մէջ բաժինդ ունենալ:

Մատք. 26.11-ի մէջ Տէրը ըսաւ. «Վասն զի աղքատները ամէն ատեն ձեզի հետ ունիք, բայց զիս ամէն ատեն չունիք»: Դուն ես այն մէկը, ով պէտք է ձեռք մեկնի կարիքաւորներուն, դուն ես այն մէկը ով պէտք է աղօթէ անոնց կարիքներուն համար, քանի որ այս է Հօր կամքը:

Հարուստ մարդը աղքատ Ղազարոս մը ունէր իր դրան մօտ: Ամէն օր երբ հարուստը իր պալատէն դուրս կուգար, աղքատը այստեղ նստած էր. հարուստը կրնար ձեւացնել որ շտեսաւ զինք, ան կրնար ըսել որ շատ վճարներ ունի ընելու այս ամիս, եւ այդ խեղճին օգնելը հետաձգեր յաջորդ ամսուան...

Գիտէք, որ այդ աղքատ մարդը իր աղքատութեան պատճառով երկար պիտի չկրնար գոյատեւել, ան շուտով պիտի մեկնել իր Տիրոց հետ ըլլալու. հարուստ մարդն ալ պիտի մեկնելը Տիրոցը դէմ կանգնելու եւ պատասխան տալու իր ըրածներու համար:

«Ամէն բան ձեզի ցուցուցի, թէ այսպէս պէտք է աշխատիլ ու տկարներուն օգնութիւն ընել եւ միտք բերել Տէր Յիսուսին խօսքը՝ որ ինք ըսաւ. «Աւելի երանելի է տա՛լը, քան թէ առնելը»» (Գործք 20.35):

Մենք շնորհակալ ենք Ձեզ, եւ թող որ Տէրը օրինէ Ձեզ եւ Ձեր ջանքերը Անոր Թագաւորութեան առաջխաղացման գործին մէջ: